# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ինգլիշ Թրեյդ Հաուզ ՍՊԸ -ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | UAB SCT Lubrikants | Mannol | Շարժիչի յուղ 10W-40 | SCT Lubrikants | Շարժիչի յուղ Mannol TS-5 UHPD 10W-40, API CI-4 Plus CI-4/CG-4/CF-4/SL, կիսասինթետիկ, ունիվերսալ, նախատեսված բենզինային և/կամ դիզելային շարժիչների համար։ Մածուցիկության դասը՝ SAE 10W-40։ Որակի մակարդակը՝ ոչ պակաս API SL/CF կամ API SN/CF կամ API CH-4/CI-4՝ ըստ արտադրողի տեխնիկական փաստաթղթի։ Կինեմատիկական մածուցիկությունը 100°C-ի դեպքում՝ 13.0-16.3 մմ²/վ։ Մածուցիկության ինդեքսը՝ ոչ պակաս 150։ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Խտությունը 15°C-ի դեպքում՝ 0.850-0.875 գ/սմ$^3$: Ինքնաբոցավառման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 220°C: Սառեցման/հոսելիության ջերմաստիճանը՝ ոչ բարձր -36°C: Ալկալային թիվը՝ ոչ պակաս 7.0 մգ KOH/գ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փակ և չվնասված փաթեթավորմամբ, 5 լիտր տարաներով: Արտադրության ամսաթիվը՝ ոչ շուտ, քան 2026 թվականի հունվարի 1-ը: Մասնակիցը հայտով պարտադիր ներկայացնում է առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը, արտադրության երկիրը, տարայի ծավալը, ինչպես նաև արտադրողի տեխնիկական թերթիկը կամ որակի անձնագիրը, որտեղ պետք է արտացոլված լինեն սույն տեխնիկական բնութագրով պահանջվող հիմնական ցուցանիշները: Մատակարարվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողը և տեխնիկական ցուցանիշները պետք |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | է ամբողջությամբ համապատասխանեն մասնակցի հայտով ներկայացված ամբողջական նկարագրին և սույն տեխնիկական բնութագրին: Այլ ապրանքային նշանի, մակնիշի կամ արտադրողի ապրանքի մատակարարումը չի թույլատրվում: Պատվիրատուի մոտ հիմնավոր կասկած առաջանալու դեպքում Մատակարարը իր միջոցների հաշվին ապահովում է ապրանքի լաբորատոր փորձաքննությունը Պատվիրատուի կողմից նշված կամ հավատարմագրված լաբորատորիայում: Փորձաքննությամբ անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում ապրանքը համարվում է չմատակարարված, իսկ փորձաքննության, փոխարինման, տեղափոխման և այլ հարակից ծախսերը կրում է Մատակարարը: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացվում է Մատակարարի միջոցներով և հաշվին: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Инглиш Трэйд Гаус в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |